



Ամսական Տեղեկատու Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանի

2010 Ապրիլ-Յունիս ամիսներու արտադասարանային գործունեութեան

Ուրբաթ, 9 Ապրիլին, ծնողներու ընկերակցութեամբ եւ Տիկ. Անահիտ Աւանեսեանի հսկողութեամբ մանկապարտէզի փոքրիկները այցելեցին Փաստինայի Kidspace երեխաներու թանգարանը, ուր մասնակցեցան զանազան հետաքրքրական աշխատանքներու, դիտեցին միջատներ, ներկեցին, մազկցեցան, պարեցին եւ խաղան: Մանկապարտէզի սաները մտակայ այգիին մէջ ճաշելէն ետք գոհ եւ ուրախ վերադարձան դպրոց:



Մանկապարտէզի փոքրիկները իրենց ուսուցչուհիին՝ Տիկ. Անահիտ Աւանեսեանի եւ կարգ մը ծնողներու հետ:

Հինգշաբթի, 15 Ապրիլին, վարժարան այցելութիւն տուաւ Պէյրութի Վահան Թէքեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետ Պրն. Բաֆֆի Յովսէփեան: Յարգելի հիւրը ծանօթացաւ վարժարանին եւ աշակերտութեան: Յարգելի հիւրին կ'ուղեկցէին Պրն. Վաչէ Մեմերճեան՝ Լուս Անճելիսի Թէքեան Մշակութային Միութեան ատենապետի յանգամանքով, վարժարանիս հոգաբարձական կազմի ատենապետը՝ Պրն. Գէորգ Մանտոսեան, փոխ-ատենապետը՝ Պրն. Բարսեղ Գարթալեան եւ վարժարանիս տնօրէն Պրն. Վարդգէս Գուրմեան:



Չախտն՝ Պրն. Վաչէ Մեմերճեան, Պրն. Բարսեղ Գարթալեան, Պրն. Բաֆֆի Յովսէփեան, Պրն. Գէորգ Մանտոսեան եւ Պրն. Վարդգէս Գուրմեան:

Ուրբաթ, 16 Ապրիլին, մանկապարտէզի փոքրիկները սովորականէն աւելի աշխոյժ եւ ուրախ էին: Այդ օրը իրենց այցելութեան էր եկած Young Music ընկերութենէն Ms. Kristi-ն, որուն կիթառին ուրախ մեղեդիներուն տակ պզտիկները երգեցին եւ իրենց երաժշտական գործիքներով՝ տափով, ծնծողայով եւ զանգակով ձայնակցեցան երգերու կատարումներուն: Եւս ուրախ օր մը երջանիկ ու անհոգ մանկութեան օրերէն, որ հաճոյքով պիտի յիշեն միշտ:



Մանկապարտէզի երեխաները ցնծութեամբ կը ձայնակցին ուրախ երգերու հնչիւններուն:



Ուրբաթ, 16 Ապրիլին, Առաւօտեան վարժարանիս հիւրն էր Հայաստանի Viva Cell հեռահաղորդակցութեան ընկերութեան գործադիր տնօրէնը՝ Պրն. Ռալֆ Երիկեան: Աշակերտներուն համար շատ հետաքրքրական էր ծանօթանալ ծագումով լիբանանահայ անձնատրութեան մը հետ, որ ընտրած էր տեղափոխուիլ հայրենիք եւ այնտեղ ստանձնել հեռաձայնի ամենանեծ ընկերութեան ղեկավարի պատասխանատու պաշտօնը: Պրն. Ռալֆ Երիկեան վարժարանիս աշակերտութեան հետ անկեղծօրէն կիսեց սփիւռքահայու իր մտահոգութիւնները, որոնք նոյնական էին ամերիկահայերու ազգային մտահոգութիւններուն հետ: Հանդիպումը արարտեցաւ փոխադարձ հաճելի եւ անկեղծ տպաւորութիւններով:

Viva Cell-ի գործադիր տնօրէն Պրն. Ռալֆ Երիկեան անմիջական եւ մտերմիկ զրոյց կ'ունենայ աշակերտներուն հետ:

Ուրբաթ, 16 Ապրիլին, վարժարանիս միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները մեծարեցին Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը՝ նշելով մեծ գրողին ծննդեան 140-ամեակը: Յայտագիրը որքան ճոխ էր,



Քառեակներ...

նոյնքան ալ բազմազան: Ամէն բանէ առաջ, վարժարանիս միջնակարգի աշակերտները, յօբելանին մասնակցեցան իրենց ձեռակերտ աշխատանքներով, որոնք կը ներկայացնէին բանաստեղծին գործերուն նիւթերը՝ “Չախորդ Փանոսը”, “Քաջ Նազար”, “Շունն ու Կատուն” եւ այլն, որոնք հանդիսատեսին ցուցադրուեցան սրահի միջանքին մէջ: Հանդիսութեան բացումը կատարեցին ասարտական դասարանի աշակերտները՝ ներկայացնելով Թումանեան մարդը, ազգային նուիրեալը, մշակոյթի ռահվիրան, հասարակական գործիչը, արուեստագէտը, մեծ մարդասէրը, զուարճախօս թամաղան, քաղաքական դէմքը, գրեթէ այն ամէնը ինչ կը կազմէ Թումանեան հանճարը: 9-րդ դասարանի աշակերտները բեմական պատկերով



Անխելք մարդը կը մերժէ սիրուն աղջիկը եւ հարստութիւնը...

ներկայացուցին քառեակները, իսկ 10-րդ դասարանի դերասանները բեմականացուցին “Անխելք Մարդը” հեքիաթը՝ հանդիսատես աշակերտներուն եւ ծնողներուն պարգեւելով ժողովրդական իմաստութենէն բխող Թումանեանի հեքիաթին զուարթ դէպքերը: Յաջորդը “Թմկաբերդի Առումը” պոէմն էր: Իրենց գործով անմահ Թաթուլ իշխանը, դասադիր իշխանուհին, նենգ Նադիր շահը հարագատ կերպարներով ներկայացան յանձին 11-րդ դասարանի ուսանողութեան: Յատկանշական էր նաեւ 12-րդ դասարանէն Դաւիթ Հայթայեանի եւ Դաւիթ Գազազեանի կազմած տեսասկարառակը (DVD)-ն, որ Ալ. Սպենդիարեանի “Ալմաստ” օպերայի հնչիւններուն տակ լուսանկարներով կը ներկայացնէր բանաստեղծին կեանքը: Յայտագիրը պատրաստուեցին եւ ղեկավարեցին միջնակարգի եւ երկրորդականի հայերէնի ուսուցիչները՝ Օրդ. Ալվարդ Ուզունեան եւ Պրն. Գրիգոր Սուքիասեան:



“Թմկաբերդի Առումը” ներկայացումէն պահ մը:

Ուրբաթ, 23 Ապրիլին, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ Ապրիլեան նահատակաց 95-րդ յուշատօնը, ինչպէս նաեւ վարժարանիս բարերար հանգուցեալ Պրն. Արշակ Տիգրանեանի մահուան 14-րդ տարելիցին առիթով հոգեհանգիստ: Երկու առիթներով վարժարանիս աշակերտութիւնը պատրաստած էր յատուկ յայտագիր: Օրուան զոյգ առիթներով ներկայ էին Հիւսիսային Ամերիկայի առաջնորդը՝ Գերաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, Արժանապատիւ Տէր Մանուկ Աւագ քինյ. Մարգարեան, Տէր Խաժակ քինյ. Շահապազեան, վարժարանիս բարերարները՝ Տիկ. Էլեանոր Տիգրանեան, Տէր եւ Տիկ. Ուոլթըր եւ Լորել Գարապեան, Տիկ. Սինտի Նորեան եւ Տիկ. Սաթենիկ Սիքայէլեան, հոգաբարձութեան ատենապետը՝ Պրն. Գէորգ Մանտոսեան եւ փոխ-ատենապետը՝ Պրն. Բարսէղ Գարթալեան: Հոգեհանգստեան պաշտօնէն ետք տեղի ունեցաւ օրուան յայտագիրը, մասնակցութեամբ վարժարանիս երգչախումբին՝ ղեկավարութեամբ Պրն. Կոմիտաս Քէշիշեանի. ներկաները հմայելուեցան եկեղեցական հոգեպարարի ազգային ոգեշունչ երգերով: 12-րդ դասարանի աշակերտները ներկայացուցին բարերար Արշակ Տիգրանեանի կեանքը եւ գործունէութիւնը, նոյն ատեն ներկայացնելով Տեղասպանութեան ոճիրին հանդէպ իրենց ցատումը եւ արդար պահանջատիրութիւնը: Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր, ուր ջարդի, նախճիրի եւ պահանջատիրութեան բովանդակութեամբ ոտանաւորներ արտասանեցին եւ ասմունքեցին երկրորդականի աշակերտները: Վերջաւորութեան, Առաջնորդ սրբազանը տուաւ իր պատգամը՝ դրուատելով հանգուցեալ բարերարին ազգային եւ մարդկային բարեմասնութիւնները եւ փոխանցելով Ապրիլ 24-ի պատգամը:



Առաջնորդ սրբազանը պատգամի պահուն



Բարերարները. ձախէն՝ Տիկ. Սաթենիկ Սիքայէլեան, Տիկ. Էլեանոր Տիգրանեան, Տիկ. Սինտի Նորեան, Տիկ. Լորդ Գարապեան, Պրն. Ուոլթըր Գարապեան, եւ հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գէորգ Մանտոսեան:

Ուրբաթ, 24 Ապրիլին, Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին շրջաբակէն ներս տեղի ունեցած յուշահանդէսին մասնակցեցան վարժարանիս աշակերտները: Արդարեւ, միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները կէսօրէն առաջ մասնակցեցան Հոլիվուտի քայլարշաին, իսկ կէսօրէն ետք ծաղկեպսակ դրին Նահատակաց յուշարձանին եւ հետեւեցան Յեղասպանութեան 95-ամեակին նուիրուած բողոքի եւ յիշատակի հանդիսութեան:



Երկրորդականի ուսանողներէն խումբ մը Նահատակաց Յուշարձանի շրջաբակին մէջ կեդրոնը՝ Պրն. Գրիգոր Սուքիասեան:

Շաբաթ, Ապրիլ 24-էն մինչեւ Ուրբաթ, Ապրիլ 30, դէպի Ուաշինկթոն եւ Նիւ Եորք կատարած շրջապտոյտը ութերորդ դասարանի աշակերտներուն յիշողութեան մէջ անցնջելի տպատրութիւններ պիտի արթնցնէ: Արդարեւ, Ուաշինկթոնի մէջ անոնք այցելեցին Թոմաս ճեֆերսոնի, Աբրահամ Լինքոլնի, Ֆրենքլին Ռուզվելթի յուշահամալիրները: Ուաշինկթոնի գլխատըր կեդրոններէն Քոնկրեսի շէնքը, Ազգային Թանգարանը եւ Սպիտակ Տունը մեծ հետաքրքրութիւն առաջ բերին աշակերտներուն մոտ, եւ հակառակ տեղատարափ անձրեւին, անոնք վայելեցին մայրաքաղաքին գեղեցկութիւնը: Ուաշինկթոնէն ետք՝ Նիւ Եորք՝ իր մարդաշատ Թայմզ Սքուերով եւ շլացնող առեւտրական եւ արուեստի ու շինարարական կեդրոններով խորունկ տպատրութիւն գործեց աշակերտներուն վրայ: Աշակերտներուն մեծ ոգետրութիւն պատճառեց այն փաստը, որ իրենք կը գտնուէին աշխարհի նիւթական զարկերակը եղող քաղաքին մէջ:



“Չքուսաշրջիկ” աշակերտները կը վայելեն ԱՄՆ-ի մայրաքաղաքը. կեդրոնը դաստիարակ Օրդ. Ալվարդ Ուզունեան:

Հինգշաբթի, 6 Մայիսին, 9-րդ դասարանի աշակերտները իրենց գիտութեան ուսուցչուհիին՝ Օրդ. Նանոր Մարգարեանի առաջնորդութեամբ ուսումնական այցելութիւն մը կատարեցին Griffith Observatory: Անոնք դիտեցին գիտական այն ցուցանմոյշները, որոնց ծանօթացած էին Երկրագունդին մասին իրենց դասին մէջ: Յատկապէս հետաքրքրական էր “Centered in the universe” laser show-ն: Ուրախ ժամանակ անցընելէն ետք, աշակերտները անմոռանալի յիշատակներով վերադարձան դպրոց:



9-րդ դասարանի աշակերտները Griffith Observatory-ի շէմին:

Ուրբաթ, 7 Մայիսին, ժամը 7:30 Փասատինայի Պէշկէօթիւրեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հանդիպում թուրք մտատրական Թանէր Աքչամի հետ: Հանդիպումը կազմակերպուած էր Հայ Իրաւանց Խորհուրդը: Հանդիպումը նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան հանդէպ Թուրքիոյ այսօրուան դիրքորոշումին: Վարժարանիս բարձր դասարանի աշակերտներէն շատեր ներկայ էին երեկոյին:


Ուրբաթ, 7 Մայիսին, առաջինն մինչև 5-րդ դասարանի 28 աշակերտներ ցուցաբերեցին իրենց արտասանական կարողությունները: Առաջնորդութամբ իրենց հայերենի ուսուցիչներուն՝ Տիկ. Ալիս Գուրուեանին եւ Տիկ. Էմմա Ումրոյեանին անոնք մէկը միասին ետեւէն գեղեցիկ ոտանաւորներով հաճելի պահեր շնորհեցին ներկաներուն, որոնց մէջ մեծ էր ծնողներուն թիւը: Գատական կազմի անդամներն էին Պրն. Վարդան Աբրահամեան, Պրն. Կոմիտաս Քէշիշեան եւ Պրն. Գրիգոր Սուքիասեան: Պայքարը այնքան զօրաւոր էր, որ դատաւորները ստիպուած էին մէկէ աւելի մրցանակներ յատկացնել փոքրիկ “ասմունքողներուն”: Յաղթական մրցանակներ շահեցան՝ Մանիա Մըրտընեան (5-րդ դասարան)՝ առաջին մրցանակ, Լիլի Ստեփանեան (5-րդ դասարան) եւ Անի Սարաֆեան (5-րդ դասարան)՝ երկրորդ մրցանակ, Վիկտորիա Թոփալեան (2-րդ դասարան), Էրիկ Գուլեան (3-րդ դասարան) եւ Ալեք Գուրուեան (4-րդ դասարան)՝ երրորդ մրցանակ:



Մրցոյթին մասնակցող աշակերտները. ուղի, կեդրոնը՝ Տիկ Ալիս Գուրուեան

Յաղթողները իրենց ուսուցչուհիներուն հետ. ձախին Տիկ. Էմմա Ումրոյեան, աջին՝ Տիկ. Ալիս Գուրուեան:

Երեքշաբթի, 18 Մայիսին, California Science Center-ը 11-րդ դասարանի աշակերտներուն ժամադրավայրն էր: Գիտութեան ուսուցչուհի՝ Օրդ. Նանոր Մարգարեանին առաջնորդութամբ անոնք բաւարարեցին իրենց անսահման հետաքրքրութիւնը եւ գիտական արկածախնդրական փորձարկումներ կատարեցին՝ իրենց աչքով “պատկերացուցին” իրենց մարմինին ջերմաստիճանը, խաղացին interactive խաղեր, հեռուստացոյցի հաղորդումներ կատարեցին, աստղաձուկեր շօշափեցին եւ նոյնիսկ շանաձուկեր տեսան: Օրուան զգայացունց դէպքը IMAX թատրոնին մէջ “Hubble 3D” ֆիլմը դիտելն էր: Ուսանողները անջնջելի տպաւորութիւններով աւարտեցին իրենց ուսումնական այցելութիւնը:



Ուսանողները նոյնիսկ ընկերացան հսկայ կրիային հետ...

Հինգշաբթի, 27 Մայիսը վարժարանիս Drama Fair-ի օրն էր: Աշակերտները առաջինն մինչև 11-րդ դասարան, հսկողութեամբ իրենց անգլերէն լեզուի ուսուցիչներուն, պատրաստեր էին զանազան կտորներ՝ ցոյց տալով բեմական ներկայացում կատարելու իրենց հմտութիւնը: Հաճելի էր տեսնել, թէ ինչպէս նախակրթարանի փոքրիկները ջանք կ’ընէին աւելի կատարեալ ներկայացնելու իրենց դերերը: Սովորական արտասանութիւններէն մինչև թատերական երկեր, աշակերտական առօրեայի դրուագներէն մինչև տեղոյն վրայ ստեղծագործելու հնարամտութեամբ ամբողջ օրը, առաւօտէն մինչև ժամը 3:30, հաճելի պահեր պարգեւեցին հանդիսատեսին:



9-րդ դասարանի աշակերտները թատերական պատկեր մը կը ներկայացնեն:

4-րդ դասարանի աշակերտները կը ներկայացնեն տեսարան մը Treasure Island թատերախաղէն:

Չորեքշաբթի, 2 Յունիսին, միջնակարգի եւ երկրորդականի արտասանական մրցոյթի օրն էր: Առտուն, աղօթքէն ետք, աշակերտները հաւաքուեցան Գարապեան սրահ, ուր 6, 7 եւ 8-րդ դասարանի աշակերտները ներկայացուցին իրենց արտասանական հմտութիւնները: Դատական կազմը, որ կը ներկայանար հետեւեալ կազմով՝ Տիկ. Էմմա Ումրոյեան, Պրն. Սարգիս Սեֆերեան եւ Պրն. Կոմիտաս Քէշիշեան հետեւեալ ձեւով սահմանեցին միջնակարգի մրցանակները՝ առաջին մրցանակի արժանացաւ Թութունջեան Մարիաննա (8-րդ դասարան), երկրորդ մրցանակ՝ Անայիս Նահապետեան (7-րդ դասարան) եւ երրորդ մրցանակին արժանացաւ Լիլիթ Շիշիկեան (6-րդ դասարան): Միջնակարգի մրցումէն ետք, նոյն օրը, երկրորդականի աշակերտները մտան պայքարի: 9-րդ դասարանէն բեմ բարձրացան Արամ Էքիմեան, 10-րդ դասարանէն Աննա Թութունջեան եւ Յովիկ Սուփիկեան, իսկ 11-րդէն՝ Ռոզի Դեմիրջեան, Լուսինէ Չէթունջեան եւ Յարութ Բերբերեան: Դատական կազմի անդամներն էին Օրդ. Ալվարդ Ուզունեան, Օրդ. Նանօր Մարգարեան եւ Տիկ. Էմմա Ումրոյեան: Առաջին մրցանակին տիրացաւ Աննա Թութունջեան (10-րդ դասարան), երկրորդ՝ Լուսինէ Չէթունջեան (11-րդ դասարան) եւ երրորդ մրցանակին արժանացաւ Յովիկ Սուփիկեան (10-րդ դասարան):



Մրցոյթին մասնակցող երկրորդական րաժնի աշակերտները. ձախէն՝ Արամ Էքիմեան, Լուսինէ Չէթունջեան, Յովիկ Սուփիկեան, Ռոզի Դեմիրջեան, Աննա Թութունջեան եւ Յարութ Բերբերեան:



Չախէն՝ Պրն. Սարգիս Սեֆերեան, Տիկ. Էմմա Ումրոյեան եւ Պրն. Կոմիտաս Քէշիշեան կը դատեն միջնակարգի մրցոյթը:



Միջնակարգի րաժնի մրցանակակիրները. ձախէն՝ Լիլիթ Շիշիկեան, Անայիս Նահապետեան, Մարիաննա Թութունջեան. աջին՝ Օրդ. Ալվարդ Ուզունեան:



Երկրորդական րաժնի մրցանակակիրները. ձախէն՝ Լուսինէ Չէթունջեան, Յովիկ Սուփիկեան եւ Աննա Թութունջեան:

Հինգշաբթի, 3 եւ Ուրբաթ, 4 Յունիսին, նախամանկապարտէզի, մանկապարտէզի եւ նախակրթարանի փոքրիկները, իսկ միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները համապատասխանաբար ունեցան իրենց դաշտագնացութիւնը՝ picnic: Աշակերտները ամբողջ երկու օրերու ընթացքին վայելեցին Կլեմէնտյի Verdugo Park-ին բնութիւնը եւ շատ ուրախ ժամանակ անցուցին բաց երկինքին տակ եւ գեղեցիկ բնութեան մէջ զանազան խաղերով, մրցումներով եւ զուարճանքներով:



Դաշտագնացութենէն տեսարան մը:



Ծնողները եւս հաճոյքով մասնակցեցան դաշտագնացութեան:

Հինգշաբթի, 15 Ապրիլին, միջ-դասարանային պասքեթբոլի մրցում տեղի ունեցավ 4-րդ-5-րդ դասարանի եւ 6-րդ դասարաններու միջեւ: Աւանդութիւն դարձած միջ-դասարանային մրցումները միշտ նպաստած են փոքրիկ մարզիկներուն ինքնավստահութեան եւ խաղի փորձառութեան: Մեծ ոգեւորութիւն կը տիրէր դաշտին վրայ: Մրցող խումբերուն դասընկերները կը քաջալերէին իրենց մարզիկները: Խաղը վերջացավ 4-րդ եւ 5-րդ դասարանի մարզիկներուն յաղթանակով:

Խաղէն տեսարան մը:



Կիրակի, 16 Մայիսին, տեղի ունեցավ վարժարանիս մարզահանդէսը, ներկայութեամբ աշակերտութեան, ուսուցիչներուն եւ ծնողներուն: Մեծ ոգեւորութիւն առաջացուցին տողանցքը եւ մարզախաղերը: Միացեալ Նահանգներու, Հայաստանի եւ վարժարանիս օրհներգներուն կատարումէն ետք տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուեան յայտարարեց մարզահանդէսին բացումը:



Մարզիչ Ռուտովֆ Ռամեհի ղեկավարութեամբ աշակերտները ցոյց տուին իրենց մարզական հմտութիւնները եւ միշտ յաղթանակի պատրաստ ոզին: “Տիգրանեան աշիւծները” բաժնուեցան երկու խումբերու՝ “Արարատ” եւ “Արագած”, որոնք ցուցադրեցին իրենց ուժերը զանազան մարզական խաղերու մէջ: Նախամանկապարտէզի եւ մանկապարտէզի

Բացման արարողութենէն տեսարան մը:

աշակերտները եւ մասնակցեցան խաղերուն հեծանիլի մրցումներով եւ վազքով: Մարզական խաղերու կազմակերպման մէջ իր մեծ աջակցութիւնը ցուցաբերեց Մարզական Յանձնախումբը՝ յանձն առնելով այդ օրուան սնունդի մատակարարումը եւ հիւրասիրութիւնը: Յանձնախումբը ջանք չէր խնայած ամէն ինչ տեղը-տեղին նախապատրաստելու այնպէս մը, որ մեծապէս նպաստէ ձեռնարկին յաջողութեան: Յաղթող աշակերտները ստացան բաժակներ եւ մետալներ: Ընթացող բուն պայքարը հաւասարութիւն բերաւ արդիւնքին մէջ եւ միայն վերջին մրցումին յայտնի դարձաւ “Արարատ” խումբին յաղթանակը:



Մարզական Յանձնախումբին անդամները մրցանակներու սեղանին շուրջ. կեդրոնը՝ Պրն. Վարդգէս Գուրուեան, ետեւը ոտքի՝ մարզիչ Ռուտովֆ Ռամեհ, աջին ֆութպոլի մարզիչ Պրն. Խաչիկ Գեորգեան:

Երեքշաբթի, 25 Մայիսին, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Մարզական Յանձնախումբին, Olive Garden-ի մէջ տեղի ունեցավ վարժարանիս ֆութպոլի եւ պասքեթբոլի ախոյեան խումբերուն ի պատիւ ճաշկերոյթ: Յաջորդաբար ՔԱՀԱՄի մարզախաղերուն եւ Հ.Բ.Ը. Միութեան մրցախաղերուն մեր մարզիկները գրաւեր էին առաջին մրցանակները:



Չախ նկարին մէջ Հ.Բ.Ը. Միութեան մրցաշարի ախոյեան՝ պասքեթբոլի խումբի տղաքը:

Աջ նկարին մէջ ՔԱՀԱՄի մարզախաղերու ախոյեան պասքեթբոլի խումբին տղաքը:

